# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N ԱՄ/111-2019

„03" „ապրիլի" 2019թ — ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ-ի հունվարի 22-ի « Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին» թիվ 46-Ն որոշման 6-րդ կետի «բ» ենթակետի և 18-րդ կետի դրույթները, համաձայն «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության եվ քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանի 8.2.1 կետի

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2019թ-ի ապրիլի 11-ին Հայասատանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Արմավիրի մարզում իմ ղեկավարությամբ անցկացնել «ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՇՈւ):
2. ՇՈւ-ի նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝
   1) ՇՈւ-ի ղեկավարի տեղակալ՝ ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ, մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ Կարեն Գրիգորյանին.
   2) ՇՈւ-ի ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հովհաննես Մարգարյանին.
3. Հաստատել՝
   1) ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
   2) ՇՈՒ-ի միջնորդական խմբի կազմը՝ համաձայն հավելված N 2-ի:
4. ՇՈւ-ին ընդգրկել՝

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

4/3/2019

X

VERIFIED OCSP 4/3/2019 18:44:49 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230 Հ.

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արմավիրի մարզպետի
2019թ-ի ապրիլի 03-ի
N 11-2019 որոշման

# Կ Ա Զ Մ
## 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

| Հ/հ | Անուն, Ազգանուն | Զբաղեցրած պաշտոնը |
|---|---|---|
| 1 | Հովհաննես Մարգարյան | Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ |
| 2 | Արտակ Կարապետյան | Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ պետ – վարչության պետի տեղակալ՝ խաղարկման և վերլուծության խմբի ղեկավար |
| 3 | Գառնիկ Ղուկասյան | Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ, խաղարկման և վերլուծության խմբի անդամ |
| 4 | Վահան Սրեյան | Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ, խաղարկման և վերլուծության խմբի անդամ |

Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արմավիրի մարզպետի
2019թ-ի ապրիլի 03-ի
տղ/N11-2019 որոշման

# ԿԱԶՄ
## 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԻ

| Հ/հ | Ուսումնավարժության մասնակիցներ | Միջնորդներ | |
|---|---|---|---|
| | | Զբաղեցրած պաշտոնը | Անուն Ազգանուն |
| 1 | Արմավիրի մարզի տարահանման հանձ-նաժողով, Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողով | Արմավիրի մարզային փրկարարա-կան վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ | Սևակ Հովհաննիսյան |
| 2 | Մրգաշատ, Զարթոնք, Արտաշար, Գեղակերտ, Արևիկ համայնքները | Արմավիրի մարզային փրկարարա-կան վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ | Արտակ Առաքելյան |

Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ